«ՍՏԵՄ ԱՐՄԵՆԻԱ» ԱՋԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ
Առաջին փուլ
Օգոստոսի 10, 2025

ԲԱՑԱՀԱՅՏԵՔ ՁԵՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՄՏԱՎՈՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մրցույթը

«ՍՏԵՄ Արմենիա | Օգոստոս 2025» մրցույթը բաղկացած է վեց քննադատական մտածողության առաջադրանքներից, որոնք պետք է լուծվեն վեց ժամվա ընթացքում: Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի միջին և ավագ դպրոցներում սովորող 13-ից 17 տարեկան աշակերտները (18 տարեկանները կարող են մասնակցել միայն այն դեպքում, եթե դեռ չեն ավարտել դպրոցը): Պատասխանները պետք է ներկայացվեն մրցույթի օրը մինչև ժամը 15:00-ն այս հղումով, Մասնակցել ներդիրի տակ:

2. Առաջադրանքներ

Առաջադրանքներն ունեն տարբեր աստիճանի բարդություն: Առանձին առաջադրանքների միավորները նշված չեն, բայց սկզբնական առաջադրանքներն ավելի հեշտ են, քան հաջորդները: Վեց առաջադրանքների միավորների գումարը կազմում է 20: Անպայման ավելացրե՛ք բացատրություններ, հակառակ դեպքում լիարժեք միավորներ չեք ստանա:

3. Արհեստական Բանականության (ԱԲ) Օգտագործումը

"ՍՏԵՄ Արմենիա" մրցույթների առցանց ձևաչափը մասնակիցներին հնարավորություն է տալիս օգտվել բազմազան ռեսուրսներից, այդ թվում՝ ԱԲ չաթբոտներից: Թեև ԱԲ օգտակարությունը բազմաթիվ հարցերում անհերքելի է, բարդ հարցումների դեպքում դրա արդյունքը հաճախ կարող է սխալ լինել: Մենք ձգտում ենք ստեղծել այնպիսի առաջադրանքներ, որոնք պահանջում են անհատական մտածողություն ու հետազոտական հմտություններ: Կարող ենք վստահությամբ նշել որ ԱԲ-ն լուծումների ուղղակիորեն պատճենումն ու տեղադրումը հեշտությամբ կբացահայտվի:

4. Տեխնիկական Նկատառում

Մենք քայլեր ենք ձեռնարկել մրցույթի սահուն տեխնիկական գործընթացն ապահովելու համար: Պատասխաններ մուտքագրելու հետ կապված հնարավոր խնդիրները նվազագույնի հասցնելու համար մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել համակարգիչ կամ պլանշետ, այլ ոչ թե հեռախոս: Եթե բախվում եք տեխնիկական դժվարությունների, փորձեք օգտագործել մի ուրիշ վեբ բրաուզեր: Խնդրում ենք նկատի ունենալ, որ մենք չենք կարող անհատական տեխնիկական աջակցություն տրամադրել:

5. Զգուշացում

Լուծումները ներկայացնելիս դուք երաշխավորում եք, որ հանդիսանում եք դրանց հեղինակը: ՄԻ ԿԻՍՎԵ՛Ք ձեր լուծումներով մրցույթի այլ մասնակիցների հետ, հակառակ դեպքում կորակազրկվեք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #1

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական ո՞ր հայտնի բանաստեղծությունից է այս հատվածը:

```
Ա-ա- ա---ա-- ա-- օ-ի-,
Ե-- -ա-Ե-ա- -ուլ-- --Ե-,
Ի- -ռ-ա--ուլ- -ի--ա--ի-
-Ե--ա-ուլ--ուլ- -ա--ևե-.
Ե- ա--ա--ա- -ի -ա-ուլ-
Ե--ուլ -Ե--- -ա--Ե-ի,
Ե- ի- ա--ռ- --Ե-ռ-
Ա-ա-ուլ--ուլ-- ---Ե-ի:
```

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #2

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԲՋԻՋ

Ի՞նչ սխալ կա կենդանական բջիջի այս սխեմատիկ պատկերում:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #3

ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #4

ՉԻՊՍԱՅԻՆ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեք ընկերուհիներ՝ Աստղիկը, Բարբարան և Գյուլնարան գնում էին Ջենիֆեր Լոպեսի համերգին Երևանում: Համերգասրահ գնալու ճանապարհին Աստղիկը գնեց 9 տոպրակ չիպս, Բարբարան՝ 5 տոպրակ չիպս, իսկ Գյուլնարան ոչինչ չգնեց: Համերգի ժամանակ նրանք չիպսերը հավասար բաժանեցին: Համերգից հետո, որպես փոխհատուցում, Գյուլնարան Բարբարային տվեց 6 մետաղադրամ, բոլորը տարբեր դրամային արժողությամբ:

Իսկ քանի՞ դրամ Գյուլնարան տվեց Աստղիկին որպես փոխհատուցում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #5

ՕԳՆԵ՝Ք ԿՐԻԱՅԻՆ

Ի՞նչ է խնդրում կրիան:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #6

ՀՈՂԻ ՎԱՃԱՌՔ

Երևանի քաղաքապետարանը որոշել է Աջափնյակ շրջանում գտնվող 400x400 մետր չափսերով հողատարածքը վաճառել մասնավոր գնորդներին՝ մեկ քառակուսի մետրը 40 հազար դրամով: Հողատարածքը պետք է բաժանվի ըստ գնորդների թվի, բայց երկու պայման կա: Առաջինը՝ յուրաքանչյուր հողակտորը պետք է քառակուսի լինի: Երկրորդ՝ ամենափոքր հողակտորը պետք է ունենա առնվազն 60 մ երկարություն:

Սկզբում կային միայն վեց գնորդներ, ուստի հողը որոշվեց բաժանել ըստ հետևյալ գծապատկերի:



Հետագայում, սակայն, դիմեցին ևս ութ գնորդներ, ուստի այժմ հողատարածքը պետք է բաժանվի 14 մասի: Այդ դեպքում որքա՞ն կարժենա ամենափոքր հողակտորը:

Հեղինակ՝ Ս. Աբաջյան